

Հ. ԱՆԱՍՅԱՆ

ԳԵՂՐԳ ՖՐԱՆՑԵՍԻ ՔՐՈՆԻԿՈՆԻ ՀԱՅԵՐԵՆ
ԱՆՏԻՊ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բյուզանդական կայսրության մայրաքաղաք Կ. Պոլսի անկման 500-ամյակի լրանալու (1953 թ.) կապակցությամբ ՀՍՍՌ Պետական Մատենադարանի ձևագրերում հայ-բյուզանդական և հոյ-հռունական հարաբերությունների վերաբերյալ նյութեր որոնելիս մեզ հաջողվեց հայտնարերել, ի միջի այլոց, բյուզանդական վերջին պատմադիր Գեորգ Ֆրանցեսի հայտնի Քրոնիկոնի հայերեն անտիպ թարգմանությունը, որը մինչեւ այժմ մը բերել էր մասնագետների ուշագրությունից:

Ինչպես հայտնի է՝ Գեորգ Ֆրանցեսի այդ երկն ամենակարևոր աղբյուրներից մեկն է Բյուզանդական կայսրության վերջին՝ Պալեոլոգների շրջանի և Կ. Պոլսի անկմանը հաջորդող մոտ քառորդ դարի պատմության վերաբերյալ, ընդգրկելով 1258 թվականից մինչև 1476 թվականը տեղի ունեցած գեղագիրը:

Գեորգ Ֆրանցեսը, որ ծնվել է 1401 թվականին, տասնյոթ տարեկան հասակից զանվել է պարատական ու պետական ծառայությունների մեջ, կատարել է դիվանագիտական կարիոր միսիաներ և մասնակցել բյուզանդական կյանքի ներքին ու արտաքին իրադարձություններին, այնպես որ նրա պատմական աշխատությունը մեծ մասմբ նվիրված է այնպիսի գեղագիրի, որոնց ժամանակակից ու մասնակից է եղել նաև Վերջին ժամանակներին Գեորգ Ֆրանցեսը կայսրության մեծ-լոգոթեան էր: Մայրաքաղաքի անկման ժամանակ նա իր ընտանիքի հետ միասին գերի մնաց թուրքերի ձեռքում, որոշ ժամանակակից հետո կարողացավ ազատվել գերությունից, հետադայում առանձնացավ Կորֆու կղզու վանքերից մեկում, այնտեղ գրեց իր Քրոնիկոնը կամ ժամանակագրությունը և այնտեղ էլ մահացավ:

Գեորգ Ֆրանցեսը Կ. Պոլսի անկման նախորդող և հաջորդող գեղագիրի իրազեկ ու լույսահղյակ պատմիչն է, այդ պատճառով էլ նրա Քրոնիկոնը հանդիսանում է պատմական մեծարժեք աշխատություն, որի ուսումնասիրությունը մերկացնում է մեր օրերի արտառահման յան մի քանի հետագիւմականների փորձերը՝ վերադնահատման ենթարկելու Բյուզանդական գիտականների փորձերը՝ վերադնահատման ենթարկելու Բյուզանդական անկման աղետալի գեղագիր էությունը և սրբելու պատմության միջից այն արատավոր էջերը, որոնք գրված են բյուզանդական քաղաքակրթությունն ավերող ու քանդող բարբարոս նվաճողների հասցեին: Գեորգ Ֆրանցեսը միաժամանակ բյուզանդական հասարակության ամենալայն խավերի շահերն ու ձգտումները մարմնավորող ժողովրդական-ուղղափառ հոսանքի անձնվեր գործիչներից և նրա քաղաքական մտածողության հա-

բազատ արտահայտիչն է եղել, մի կողմից ակտիվորեն պայքարելով թուրքական նվաճման սպառնալիքի դեմ, մյուս կողմից գիմադրելով լստինական Եվրոպայի շխաղաղը ներխուժման վտանգի դեմ:

Սովորական պատմագիտության և ընդհանրապես ոլրողինիվ բյուզանդակետների վերաբերմունքը միանգամայն գրական է եղել Բյուզանդիայի վերջին պատմագրի հանգեստ: Մուս բյուզանդագետ Ա. Վասիլյեր գրում է, որ Գեորգ Ֆրանցեսը «փր հերոս կայսրի և առհասարակ Պալեօլոգների տան հանդես անսահման սիրով տողորված և ունիայի⁸ հակառակորդ լինելով նկարագրել է Բյուզանդիայի վերջին ժամանակները, նպատակ ունենալով վերականգնել պարտված Կոստանդինի, անարդված հայրենիքի և հունական վիրավորված ուղղափառության պատիվը»¹: Խոկ մի այլ տեղ նույն գիտնականը կրկնում է իր գրական ընութագիրը նրա մասին՝ գրելով: «Ատելությունը թուրքերի հանդես, հավատարմությունը գեղի ուղղափառությունը և ամբողջ գրքով անցնող աշառու վերաբերմունքը գեղի Պալեօլոգները՝ հանդիսանում են Ֆրանցեսի բնորոշ գծերը»²:

Գեորգ Ֆրանցեսի Քրոնիկոնի հունարեն բնագիրը ծանոթ է երկու խմբագրությամբ՝ ընդարձակ և համառոտ: Ընդարձակ Քրոնիկոնը տպագրվել է երկու անգամ, առաջին անգամ՝ 1796 թ. Վիեննայում³, և երկրորդ անգամ՝ 1838 թ. Բոննայում⁴: Երկու անգամ էլ տպագրվել է համառոտ Քրոնիկոնը: Վերջինիս հարազատությունը, սակայն, որպես ուղղակի Գեորգ Ֆրանցեսի գրչից ելած աշխատություն, գեռ երկրայելի է, այնպես որ պատմագիտության մեջ երբ խոսք է լինում առհասարակ Ֆրանցեսի Քրոնիկոնի մասին, այդ վերաբերում է ընդարձակ Քրոնիկոնին, եթե հատկապես չի նշվում, թե որն է: Այդպես և ներկա էջերում Քրոնիկոնի հայերեն թարգմանության կազմակցությամբ մենք նկատի ունենք միշտ հունարեն ընդարձակ Քրոնիկոնը միայն⁵:

Հունարեն բնագրի հրատարակումից առաջ Քրոնիկոնը երկար ժամանակ ծանոթ էր միայն Հակոբ Պոնտանոսի լատիներեն վատորակ թարգմանությամբ, որը լույս էր տեսել 1604 թ. Ինգոլշտադտում, Թեոփիլակոս Սիմոնատեսի Պատմության վերջում: Հունարեն բնագրի Բոննայի հրատարակության մեջ լույս տեսավ լատիներեն մի ուրիշ թարգմանություն և, որը կատարված էր Բրոկհոֆի կողմից: Լատիներեն այս կրկին թարգմանություններից բացի Քրոնիկոնի ուրիշ թարգմանություն ծանոթ չէր մեղ մինչև օրս. այժմ, սակայն, պարզվում է, որ մենք ունենք նրա (ըն-

* Եկեղեցական միության շարժում՝ հունական և լատինական եկեղեցիների միացորման նորատակով:

¹ А. А. Васильев, «Падение Византии; эпоха Палеологов (1261—1453)», Ленинград, «Академия», 1925, стр. 74.

² Ibidem, 114.

³ «Χρονικόν Γεωργίου τοῦ Φραγκῆτοῦ πρωτοβεστιαρίου... γῶν πρῶτον ἐκδοθεῖσα Φ. Κ. Ἀλτερό, ἐν Βιέννη τῆς Ἀουστρίας, 1796.

⁴ Բյուզանդական պատմագիրների հետեւ ժողովածուների մեջ. «Corpus scriptorum historiae byzantinae» etc., հրատ. Ամ. Bekker-ի, Bonnae, 1838.

⁵ Հետեւ հրատարակությունների մեջ. Ang. Mai, «Classici auctores», t. IX, Romae, 1837, p. 594f. J.-P. Migne, «Patrologiae cursus completus», series graeca, t. CLVI, Parisiis, p. 551f.

⁶ Հայունենք, որ մենք ձեռքի տակ չենք էլ ունեցել համառոր:

դարձակ Քրոնիկոնի) հայերեն թարգմանությունը, որը կտարված է ԺՀ դարի երկրորդ կիսին՝ այս շրջանի հայ դրական գործիչներից Մելքիսեդիկ թարգմանի ձեռքով:

Գնորդ Ֆրանցեսի Քրոնիկոնի հայերեն թարգմանությունը գտնվում է ՀՍՍՌ Պետական Մատենադարանի № 2644 ձեռագրում, որը անցյալ դարի 40-ական և 50-ական թվականներին թաղեաս Միհրդատյանցի կողմից համարված մտաենագրական նյութեր է պարունակում:

Ավելորդ համարելով մի առ մի թվարկել այսուեղ այդ նյութերը, միայն կնշենք, որ նրանցից մի մասը Ծուրեն Պաղտասարյանի ձեռքով է բնդօրինակվել, մյուս մասը՝ նույնինքն Թ. Միհրդատյանցի ձեռքով, իսկ վերջում մի կոոր էլ՝ մի անծանոթ գրչի ձեռքով:

Արդ՝ № 2644 ձեռագրի այս նյութերի շարքումն է գտնվում Գնորդ Ֆրանցեսի Քրոնիկոնը, որը «Պատմութիւն Յունաց տէրութեան և Կոստանդնուպոլսոյ տաման» խորագիրն է կրում (էջ 121ա—202ա). Այս բնագիրը բնդօրինակման հիշատակարան չունի, բայց չի կաթելի անուշադիր թողնել այն հանդամանքը, որ սա և որան նախորդող՝ Մատթեաս Ռունացու ժամանակագրությունը միևնույն գրչի՝ Խուրեն Պաղտասարյանի ձեռքով են բնդօրինակվել, իսկ Ռուսայեցու ժամանակագրության վերջում գտնում է հետեւյալ հիշատակարանը.

«Օրինակեցաւ գիրս այս, որ է պատմութիւն Մատթէոսի Ռւսայեցւոյ, ի թանգարանէ Պալատոյ Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ. գրչութիւնն հին, բայց անթուական էր. գոյր ի մէջ սորտ պատմութիւն Խիկարայ իմաստասիրի և պատմութիւն Մեծին Ներօէսի: Ի վայելումն Թաղէսս ազայի Միհրդատեան: Գծագրեաց Ռուրէն Պաղտասարեան, աշակերտ Սուրբ Սահակեան վարժարանին ի Սամաթիայ: Ի 1853 ամի, ի Սամաթիայ» (էջ 118թ):

Կարծում ենք, որ Մատթեաս Ռուսայեցու ժամանակագրության հետ միասին «Պատմութիւն Յունաց տէրութեան և Կոստանդնուպոլսոյ տաման» բնագիրը ևս կ. Պոլսի Պալատ թաղի հայկական թանգարանի ձեռագրերից է գալիս,— գուցե ոչ միևնույն ձեռագրից,— և նույն գրչի ձեռքով արտադրվել է Թ. Միհրդատյանցի համար:

Ինչպես գիտենք՝ Թ. Միհրդատյանը հայկական մտաենագրության անտիպ բնագրեր էր հավաքում և պատրաստում տպագրության: Այդպիսիներից նա 1851 թ. կ. Պոլսում հրատարակեց «Պատմութիւն Սերէսսի ի Հերակլին» աշխատությունը, որի առաջարանում եռանգագին շեշտում էր մատենագրական արժեքավոր բնագրերի որոնման և տպագրման կարեւության մասին: Սերէսսի Պատմության ապագրությունից հետո Թ. Միհրդատյանը մեզ անհայտ պատճառներով չկարողացավ շարունակել իր գործունեությունը այդ ուղղությամբ: Թ. Միհրդատյանը 1853 թվականին բնդօրինակել տալով այս Քրոնիկոնը, ըստ երեսոյթին, մտագրված է եղել տպագրել այդ՝ կ. Պոլսի անկման 400-ամյակի առթիվ:

Գետք է նշել, որ այսուեղ «Պատմութիւն Յունաց տէրութեան և Կոստանդնուպոլսոյ տաման» խորագիրը պայմանական է լոկ, որովհետև՝ նախդա ոչ թե բնագիրն արտագրողի ձեռքով է գրված, այլ հետո միայն և մատիտով է ավելացվել Թ. Միհրդատյանի ձեռքով, և երկրորդ՝ այդ խորագիրը գտնվում է ոչ թե այն էջում, որտեղից բնդօրինակությունն է:

սկսվում, այլ սկզբում զետեղված դատարկ և ավելորդ թերթի վրա, որով և կասկած չի մնում, որ Պալատի օրինակից չի դալիս այդ խորագիրը: Իսկ բուն բնագրի ընդօրինակությունն սկսվում է 122ա էջից՝ Ա. դրքի Ա. գլուխի վերնագրով. «Դիրք առաջին: Գլուխ Ա. Յաղագս պատճառաց Բալէօկասաց թագաւորութեանն»:

Համեմատելով Գևորգ Ֆրանցեսի Քրոնիկոնի հայերեն թարգմանության այս օրինակը նրա հունարեն ծանոթ բնագրի հետ¹, նկատեցինք որոշ հանգամանքներ, որոնք, մեր կարծիքով, կարող են հետաքրքրություն ներկայացնել Քրոնիկոնի բնագրագիտական խնդիրներով զրադվող գիտնականների համար:

Բնագրի ամբողջականության տեսակետից՝ համեմատությունը ցույց է տալիս, որ հայերեն թարգմանության այս ընդօրինակությունը չունի հեղինակի նախարանը (Προοίμιο), այլ սկսվում է, ինչպես ասացինք, ուղղակի Ա. դրքի Ա. գլուխով, և արդեն այս է պատճառը, որ հայերեն բնագրիրը հունարենի ընդհանուր վերնագրին էլ չունի: Ա. և Բ գրքերը կան ամբողջությամբ, Գ գիրքը լրիվ չկա, այլ պարունակում է միայն մինչև Գ գլուխը մասամբ ներառյալ, իսկ մնացած գլուխները (Դ. մասամբ—Ժ. գլուխները), ինչպես և Դ գիրքն ամբողջությամբ (Ս.—Ե.Գ գլուխները) չկան: Այսպիսով հայերեն թարգմանության այս ընդօրինակությունը կանգ է առնում հունարեն հրատարակության 258-րդ էջի 18-րդ տողի վերջակետի վրա:

Կասկած չկա, որ այս նկատելի թերույթը ձերթեր թափվելու հետեւանք չէ, քանի որ այժմյան վերջին թերթի վրա դրված է խոշոր վերջակետը: Արդյոք որոշ դիտումն է, որ այս ընդօրինակությունը թերի է թողնվել, թե այդ թերույթը գալիս է այն նախադադարձար օրինակից, որից ընդօրինակվել է սույնը: Ավելորդ ենք համարում զրադվել ենթադրություններով:

Հայերեն թարգմանության մեր այս օրինակը կատարելավեռ համընթանում է հունարեն բնագրի հետ, բայց ուշադրության արժանի երեւլույթներ է պարզում բնագրագիտական տեսակետից: Նախ՝ գլխարաժանման տարրերությունները, և երկրորդ՝ բնագրի ընթերցվածների տարրերությունները:

Գրքերի կամ հատորների բաժանումը հայերեն և հունարեն բնագրերի մեջ նույնն է, բայց գրքերի ներքին բաժանումները տարրերովում են: Երբեմն հունարենի մի քանի գլուխները միացած են հայերենում, իսկ երբեմն, ընդհակառակն, հունարենի մեկ գլուխը երկուսի կամ երեքի է բաժանված հայերենում, որի հետեւանքով Ա. գիրքը հայերենում ունի 31 գլուխ, իսկ հունարենում՝ 40. Բ գիրքը հայերենում ունի 20 գլուխ, իսկ հունարենում՝ 19. Գ գիրքը հայերենում ունի 5 գլուխներ, որոնք համապատասխանում են հունարենի 4 գլուխներին (4-րդ գլուխը մասամբ միայն ներառյալ): Բացի այդ՝ Քրոնիկոնի որոշ գլուխներ հայերենում ունեն վերնագրեր, որոնք երբեմն պատճառում են հունարենի այս կամ այն ձեռագիր օրինակում, ինչպես տեսնում ենք Բոննայի հրատարակության տարբնթերցվածներում (հմմտ. էջ 36, տող 4, էջ 40, տող 14, և այլն):

¹ Մեր առաջ ունենք Բոննայի հրատարակությունը, որը նշել է նաև Վիեննայի հրատարակության էջերը և մի քանի ձեռագիր օրինակների տարբնթերցվածները:

Նույնքան և ավելի ուշագրով են այն մի շաբաթ, թվով ոչ զանցառելի, տարրերությունները, որոնք գոյաթյուն ունեն հունարեն ծանոթբենագրի և հայերեն թարգմանության բնագրի միջև և որոնք չեն երևում հունարենի ծանոթ վարիանտներում ևս։ Այսպես, օրինակ, հունարենում կարդում ենք.

„... ἀπέθανε καὶ ἡ δέσποινα κυρία Εὐγένεια ἡ τοῦ Κατελιούτη θυγάτηρ τοῦ τῆς Λέσβου αὐθέντου“ (*Ἑρμηνεία* 191, *ταῦτα* 18—19).

Push *AngularJS*

«...և տիրուհի խաթռն էւկենիայն՝ որ էք դուստր Քատելիուծի,
Սերգիայի մեծաւորին, վախճանեցաւ» (Եջ 181ա):

Դարձյալ հունարենում կարդում ենք.

„... καὶ τὸν Μονεμβασίας κύριο Θεοδόσιον“ (*I&G* 190, *παρηγ.* 19—20):

Puhimajärven kunnan ja myymälän.

«...և զՄոնէմվասիայի տէր Թէոդորոսն» (էջ 180թ):

Պարզ է, որ տարրեր անուններ են Աստվածաշնչի և Սբ Հակոբի, Յաղագի և Յաղագի մասնագիտական գրականության բացակայության հետեւ վանքով մենք հնարավորություն չունենք այսակա ծանրանուր այսպիսի բնագրական տարրերությունների վրա՝ նրանց արժեքը գնահատելու համար ի նպաստ մեկ կամ մյուս կողմի:

Այսպես նաև հունարեն հրատարակության մեջ որպես տեղանուն հիշվում է Պարέնտո (լատ. Parentium), որ է խտոր. Parenzo, Խոտրիայի նավահանգիստներից մեկը, Վենետիկից ոչ շատ հեռու։ Այս անունը հայերեն թարգմանության տեքստում ունի Գարանտինոս (Ταραντινος) ձեր, որն հիշեցնում է հարավային Խոտոլիայի նավահանգիստ՝ այժմյան Taranto կամ Tarento-ն (լատ. Tarentum)։ Ֆրանցիսը առանց առելու, թե Ֆերրարայի ժողովին մասնակցելու համար կ. Պոլսից կայսրի զԼիսավորությամբ Խոտոլիա մեկնող բյուզանդական պատվիրակության նավերն իտալական որ նավահանգիստն էին հասել, սկսում է պատմել, թե այս վերջին վայրից նավերը 1438 թ. փետր. 7-ին իրենց ճանապարհը շարունակել էին գեղի Վենետիկ։ Այսեղ հունարեն բնագիրն ասում է.

„Κατὰ τὴν ἐβδόμην τοῦ Φεβρουαρίου μηνὸς ὥρησασαι ἐκ τοῦ Παρεγτίου πᾶσαι αἱ τριήρεις ὄμοι, ἡ δὲ βασιλικὴ τριήρης διὰ τὸ εἶναι αὐτὴν ταχυτέραν τῶν ἄλλων προσαπέτωσε τῶν ἄλλων εἰς ‘Ἐνετίαν’ (ἴδι 181, μηνὴ 14—17):

Paul 5mgleplesus qpmjwds k.

«Ի եօթն գիտրվածի ամսոյն գիմեռլ ի Գարանտինուէ ամենայն նուքն ի միասին, և թագաւորական նուն վասն գոլոյն արագընթաց քան զայլոն, նախաժամանեաց ի Վենետիկ» (էջ 177թ):

Անտարտիկույս Ա և Տ տառերի շփոթությունից է առաջ եկել այս տարրերությունը՝ երկու բնագրերում:

Քրոնիկոնի հայերեն թարգմանությունը, անշուշտ, չի կարող իր նշանակությունը չունենալ նրա հունարեն ծանոթ բնագրի որոշ մասերը լուսաբանելու ակտակետից, եթե մանավանդ նկատի ունենանք, որ հունարեն բնագրում գոյություն ունեն նշանակալի ազավագումներ, որոնցից մի մասը ուշագրության առարկա է դարձրել ըյուղանդադեռ-բանակը Գ. Դես-

² Նկատի ունենալ, որ թարգմանիչը հունական հատուկ անունների մեջ պահել է հունարեն ժամանակակից արտասանությունը։ Իսկ նրա կիրառած տառադարձության սիստեմը ձիւառ ու ձիւառ այժմյան արևմտահայ տառադարձության սիստեմն է։

տունիսը սրանից գեսկո 60 և ավելի տարիներ տառջ¹. Դրանում համազվելու համար կարելի է մի երկու օրինակով համեմատության դնել հայերեն թարգմանության բնագիրը. Դեստունիսի կատարած դիտողությունների հետ, որոնց հետ ըստ ամենայնի համաձայնվում է հայերեն թարգմանությունը:

Գեորգ Ֆրանցեսը Վրաստանում և Տրավիզոնում իր կատարած միսիայից վերադառնալու (1451թ.) պատմությունը գրելիս խոսում է, ի միջի այլոց, վրաց թագավորից նվեր ստացած երկու գերիների մասին. Դեստունիսը դիտել է տալիս, որ Քրոնիկոնի ընդարձակ բնագրում չի առվում, թե այդ գերիները որտեղից էին գերվել. „καὶ δύο οὖς ὁ βασιλεὺς Ἰβρι-ρίας μοι ἐδωρήσατο ἐκ τῶν ὧπ’ αὐτοῦ αἰχμαλωτισθέντων, δύτε τοὺς αἰχμαλώτους ἐσ-κύλευσεν“ (Էջ 213, տող 9—11), մինչդեռ համառոտ Քրոնիկոնը հայտնում է, որ նրանք Շամախիի արշավանքի ժամանակ էին գերվել („περὶ τὸ Σαράγγο“): Համառոտի միջոցով այս ավյալը ձեռք բերելուց հետո Դեստու-նիսը գտնում է, որ ընդարձակ Քրոնիկոնի մի քանի ձեռագիր օրինակնե-րում Սարάγη (Շամախի) անվան միայն բեկորները կան պահված՝ սպավաղ այլ կերպուրանք ստացած նախագասության մեջ, փոխարինելով վերոնշյալ հատվածի վերջին չորս բառերին, այսպես՝ „ὅτε ἐν τῇ ψάχῃ ἐσκύλευσεν“, „ὅτε τόστιν ψάχῃ ἐσκύλευσεν“, „ὅτε τόσον ψάχῃ ἐσκύλευσεν“²:

Արդ՝ հայերեն թարգմանությունը ճիշտ և դիտողության համապա-տասխան կերպով պահել է նունարեն բնագրի այս մասը, հետեւյալ բառե-րով. «և զերկու մանկտիս, զոր թագաւորն Իվիրիայի ինձ շնորհեաց յիւրմէ զերեցելոցն, յորժամ կողապտեաց զՇամախին» (Էջ 188ա):

Կանգ տանենք Գ. Դեստունիսի մի ուրիշ դիտողության վրա:

Գեորգ Ֆրանցեսը պատմում է, որ 1439թ. Կիր Կոստանդինը Պատ-րուսից համառում է Եվրիպոս կղզին և այնտեղից մեկնում դեպի Կ. Պոլիս. Այս մասին նունարեն ընդարձակ Քրոնիկոնում գրված է:

„... καὶ ἐμβάντες εἰς τονα τῶν ‘Ενετῶν τοιήτη ἀπό ἀστεος Εορίπου Εօζοιαν λεγομένης“ (Էջ 163, տող 4—5):

Բայց այս ընթերցման վենետիկյան նավի անունը նվրեալ է, ինչպես հասկացել են նաև ու թարգմանել Պանտանոսն ու Բրոկնոֆը: Դեստունիսը նշում է, որ երկու ձեռագրերում այս ընթերցվածի տարրերակներ կան, որոնք նույնական բավականին մութ են („ἀπό τινος ἀστεος τῆς εύριπου εύθοίας λεγομένου“, „ἀπό τινος ἀστεος τῆς εύριπου εύθοίας λεγομένηγ ἐπλεύσαμεν“), և նա դիմում է համառոտ Քրոնիկոնի օգնության, բայց սա ևս չի օգնում կարգի բերելու աղավաղված նախագասությունը³:

Այսուեղ հայերեն թարգմանությունը մեղ ասում է, որ նվրեալ ոչ թե վենետիկյան նավի անունն է, այլ Եվրիպոս կղզու մի ուրիշ անունը. «և անտի ի մի ի նաւուցն վենետիկցոց մակալ ի միոյ բերդէն Եւրիպոսի,

¹ Г. Дестунис, „Опыт биографии Георгия Франдзия“, Журнал Министерства Народного Просвещения, часть CCLXXXVII, 1893, № 6, отд. 2, стр. 427—497. Idem, „Заметки по исправлению текстов в обеих летописях Франдзия“, Журнал Министерства Народного Просвещения, часть CCXCI, 1894, № 1, отд. классич. филол., стр. 1—11.

² Г. Дестунис, „Опыт“ и т. д., стр. 474, прим. 1.

³ Г. Дестунис, „Заметки“ и т. д., стр. 5.

որ էվլիայ կոչի» (էջ 172ա): Եվ իրոք հայտնի է, որ եվրիպոսը կամ Նեղրեպոնտոսը, որը Եղեական ծովի ամենամեծ կղզին է, կոչվում էր նաև Եվրիա:

Այսպիսի բնադրական գիտողությունների շարքը կարելի է երկարել, սակայն մենք չենք ուզում գուրս գալ գիտական հազորդման համար բնդունված սահմաններից: Մեր նպատակն է լոկ մասնագետների ուշագրությունը հրավիրել Քրոնիկոնի հայերեն թարգմանության գոյության ու նրա նշանակության վրա:

Պետք է նշել, որ Քրոնիկոնի հայերեն թարգմանության մեր այս օրինակի մեջ ևս նկատելի են աղճատման բազմաթիվ գեղքեր, որոնք բնդօրինակող ձեռքի բացահայտ վրիպութներն են ցույց տալիս: Արդեն ձեռագրի տեր Թ. Միհրդատյանցը մտադիտով տեքստի լուսանցքներում նշանակել է մի շարք լեզվական և բնադրական կարգի գիտողություններ, բայց նա գժըսխառար համեմատություն չի կատարել այն օրինակի հետ, որից կատարվել է բնդօրինակությունը: Նրա գիտողությունները շատ գեղքերում ճիշտ են, երբեմն հավանական են և երբեմն էլ տարակուում են: Մենք ևս մեր կողմից նկատել ենք գրչական մի շարք սխալներ, որոնք վրիպել են Թ. Միհրդատյանցի ուշագրությունից: Սակայն արդարիսի գրչական վրիպութները դյուրությունը նկատելի են և չեն կարող բնդհանրապես շփոթվել այնպիսի բնադրական աղավաղութների հետ, որպիսիների մտաին խռովցինք վերեւում:

Այժմ կա նաև Քրոնիկոնի հայերեն թարգմանության նախագաղափար օրինակի հարցը: Ինչպես տուել ենք արդեն՝ հայերեն թարգմանության մեր ձեռքի տակ եղած օրինակը (ձեռ. № 2644) կ. Պոլսի Պալատ թաղի հայերեկան թանգարանի ձեռագրերից է արտագրված եղել: Արդյոք որտեղ է գտնվում ներկայումս այդ ձեռադիքը: Նրա հետքերը դանելու համար մենք զիմնեցինք Մեսրոպ Մագիստրոսի կազմած «Հայերեն ձեռագրաց ընդհանուր ցուցակ»-ին¹, որտեղ ընդդրված է նաև պոլտահայ ձեռագրերի նկարագրությունը: Այդ ցուցակում, սուկայն, մենք դաշնք հիշատակություն ու թե Պալատ, այլ Օրթագյուղ թաղի մի ձեռագրի մասին, հետեւյալ ձեռվ. «Յաղագս պատճառաց Բալէօլօկոսաց թագաւորութեան». թարգ. ի թուին 1772. Զ. Օրթագյուղ. նոոր. 390 էջ²: Օրթագյուղի այս ձեռագիրը նույն չէ՝ արդյոք այն ձեռադրի հետ, որը մեկ գար առաջ Պալատումն էր գտնվում: Դժվար է այդ մասին պնդել, բայց գայ համանական է: Այսուեղ ավելորդ չենք, որ մեր № 2644 ձեռագրութն էլ, եթե բաց թողնենք Թ. Միհրդատյանցի մտադիտով նշանակած վերնագիրը, բնադրի վերնագիրը ճիշտ և ճիշտ «Յաղագս պատճառաց Բալէօլօկոսաց թագաւորութեան» է, որն, իրականության մեջ, Ա. գրքի Ա. գլուխի վերնագիրն է:

Քրոնիկոնի հայերեն այս թարգմանության երկու թերի օրինակներ էլ գտնվում են Փարիզում, Bibliothèque Nationale, Ms. Arm. № 234 (=Suppl. Arm. № 46) և Ms. Arm. № 235 (=Suppl. Arm. № 53). Այս օրինակներում

¹ Մեսրոպ Մագիստրոսի այս անտիոք աշխատությունը գտնվում է Հայկական ՍՍԾ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի արխիվում:

² Մեսրոպ Մագիստրոսը Քրոնիկոնի հեղինակի անունը նշում է «Փեորդ Պաղպացի»՝ թյուրիմացար Phrantzes-ը շփոթելով ֆրանց (ֆրանսիացի, զազդիացի) բարի հետ:

ևս պակասում է Նոխարանը. բայցի այդ՝ դրանցից առաջինը պարունակում է Ա. և Գ. գրքերը, բայց պակասում են Գ. գրքի Ժ և Ժ. գլուխները. իսկ երկրորդը պարունակում է Բ. և Գ. գրքերը, բայց պակասում են Բ. գրքի Ա. — Ժէ գլուխներն ու Ժ. գլուխի սկզբնավորությունը¹.

Մեսրոպ Մագիստրոսի Յուցակում Գեորգ Ֆրանցեսի անվան տակ նշվում են նաև Երուսաղեմի Երկու ձեռագրեր՝ №№ 464 և 482, այսպիսի խորագրով. «Յաղագս առման Կ. Պոլսոյ. յամի 1481 (ՏԸԸ): Մեզ հայտնի չէ այս ձեռագրերի բովանդակությունը. Արդյոք սա բնդարձակի Քրոնիկանի թարգմանությունն է, թե համառոտ Քրոնիկանի: Եվ եթե բնդարձակի թարգմանությունն է՝ արդյոք սա մեզ ծանոթ թարգմանության հետ նույնն է, թե մի ուրիշ թարգմանություն է:

Մեր № 2644 ձեռագրում Քրոնիկանի թարգմանչի անունը չի երևում, բայց փարիզյան ձեռագրերում նշված է, որ թարգմանությունը կատարվել է Մելքիսեդեկ Թարգմանի ձեռքով 1768—1772 թվականներին²:

Մելքիսեդեկ Թարգմանը կամ Մելքիսեդեկի Բանասերը ծանոթ է մեզ ինքնուրույն և թարգմանական Երկերով: Նրա ինքնուրույն աշխատությունների մեջ առանձնապես հիշատակվում է «Ճառ գովութեան գովելիաց»-ը, որը մի քանի ժամանակակիցների կենսագրությանն էր նվիրված: Որպես բայց հունագետ՝ Մելքիսեդեկը հունարեն լեզվից կատարել է մի շարք թարգմանություններ զանազան հեղինակներից (Գեորգ Ֆրանցես, Իգնատիոս Անտիոքացի, Սամուել Թարրի, Եվստրատիոս Արգենտի, և այլն): Թվում է, թե Մելքիսեդեկը Պալտակցի էր, որովհետեւ ապրել ու գործել է Պալտակ (Կ. Պոլիս) Ա. Հրեշտակապետ եկեղեցու հովանու տակ: Եթե նա ծննդյամբ կոստանդինապոլսեցի էլ չէ, համեմայն դեպք պոլսահայ գործոցի գրական գործիչներից է, եթե նկատի ունենանք, որ նրա թարգմանությունները լեզվական և սճի առանձնահատկությունների տեսակետից պատկանում են այն խմբին, որի աչքի ընկնող ներկայացուցիչը Գեորգ Պալտակցին է: Մելքիսեդեկը մահացել է 1774 թ. հունվարին³:

Մելքիսեդեկ Բանասերի թարգմանությունների մեջ ամենաթանկարգիններից մեկը Գեորգ Ֆրանցեսի Քրոնիկան է:

¹ F. Macler, «Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque Nationale», Paris, 1908, p. 124.

² Ibidem.

³ Մելքիսեդեկ Բանասերի գրական աշխատանքների մասին տեսնել մեր «Հայկական ժամանագիտություն» (Հնադույն ժամանակներից մինչև ԺԹ դար)» աշխատությունը, որը հրատարակության ընթացքի մեջ է:

* * *

Հետեւալ համեմատական ցուցակը պատկերում է Գեորգ Ֆրանժեսի Քրոնիկոնի հունարեն բնագրի և հայերեն թարգմանության բնագրի (ըստ մեր օրինակի) միջև դաշտուն ունեցող տարրերությունները՝ դրանք կամ հատորների ներքին բաժանումների վերաբերյալ:

Պիպ Ա.

Հայ. թարգմ.

Հուն. թի.

Պիպ Բ

Հայ. թարգմ.

Հուն. թի.

$\eta_l.$ 1	$\eta_l.$ 1	$\eta_l.$ 1	$\eta_l.$ 1
$\eta_l.$ 2	$\eta_l.$ 2	$\eta_l.$ 2	$\eta_l.$ 2
$\eta_l.$ 3	$\eta_l.$ 3	$\eta_l.$ 3	$\eta_l.$ 3
$\eta_l.$ 4	$\eta_l.$ 4	$\eta_l.$ 4	$\eta_l.$ 4
$\eta_l.$ 5	$\eta_l.$ 5	$\eta_l.$ 5	$\eta_l.$ 5
$\eta_l.$ 6	$\eta_l.$ 6	$\eta_l.$ 6	$\eta_l.$ 6
$\eta_l.$ 7	$\eta_l.$ 7	$\eta_l.$ 7	$\eta_l.$ 7
$\eta_l.$ 8	$\eta_l.$ 8	$\eta_l.$ 8	$\eta_l.$ 8
$\eta_l.$ 9	$\eta_l.$ 9	$\eta_l.$ 9—10	$\eta_l.$ 9
$\eta_l.$ 10	$\eta_l.$ 10	$\eta_l.$ 11	$\eta_l.$ 10
$\eta_l.$ 11	$\eta_l.$ 11	$\eta_l.$ 12	$\eta_l.$ 11
$\eta_l.$ 12	$\eta_l.$ 12	$\eta_l.$ 13	$\eta_l.$ 12
$\eta_l.$ 13	$\eta_l.$ 13	$\eta_l.$ 14	$\eta_l.$ 13
$\eta_l.$ 14	$\eta_l.$ 14	$\eta_l.$ 15	$\eta_l.$ 14
$\eta_l.$ 15	$\eta_l.$ 15	$\eta_l.$ 16	$\eta_l.$ 15
$\eta_l.$ 16	$\eta_l.$ 16	$\eta_l.$ 17	$\eta_l.$ 16
$\eta_l.$ 17	$\eta_l.$ 17—18	$\eta_l.$ 18	$\eta_l.$ 17—18
$\eta_l.$ 18	$\eta_l.$ 19	$\eta_l.$ 19—20	$\eta_l.$ 19
$\eta_l.$ 19	$\eta_l.$ 20		
$\eta_l.$ 20	$\eta_l.$ 21		<i>Պիպ Պ</i>
$\eta_l.$ 21	$\eta_l.$ 22		
$\eta_l.$ 22	$\eta_l.$ 23—26	Հայ. թարգմ.	Հուն. թի.
$\eta_l.$ 23	$\eta_l.$ 27—32	$\eta_l.$ 1	$\eta_l.$ 1, 2 (<i>մասամբ</i>)
$\eta_l.$ 24	$\eta_l.$ 33	$\eta_l.$ 2	$\eta_l.$ 2 (<i>մասամբ</i>)
$\eta_l.$ 25	$\eta_l.$ 34	$\eta_l.$ 3—4	$\eta_l.$ 3 (<i>մասամբ</i>)
$\eta_l.$ 26	$\eta_l.$ 35	$\eta_l.$ 5*	$\eta_l.$ 3 (<i>մասամբ</i>), 4 (<i>մասամբ</i>);
$\eta_l.$ 27	$\eta_l.$ 36		
$\eta_l.$ 28	$\eta_l.$ 37		
$\eta_l.$ 29	$\eta_l.$ 38		
$\eta_l.$ 30	$\eta_l.$ 39		
$\eta_l.$ 31	$\eta_l.$ 40		

» Մեր այս օրինակում հայերեն թարգմանությունը կանոնական հունարեն բնագրի 258-րդ էջի 18-րդ տողի վերջակետում (ըստ Բաննայի հրատարակության):

